



«Տեառնընդառաջ» բառը կազմուած է «Տեառն» եւ «առաջ» բառերէն ու «ընդ» միջնաձանցէ, որ կը նշանակէ Տիրոջ առաջ երթալ, Անոր ներկայանալ:

Մովսիսական օրէնքին համաձայն, երբ կին մը գաւակ ունենար քառասուն օր ետք պէտք է տաճար երթար, Աստուծոյ աղօթք եւ տաճարին նուէր ընծայէր: Յիսուսի ծնողները եւս իրենց հետ առնելով զոյգ մը տատրակ, քառասուրեայ մանուկը կը բերէն տաճար, Աստուծոյ ընծայաբերելու (այս աւանդութեան ակնարկութիւնն է նորածինը «քառասունքէն հանելու» մերօրեայ հայկական սովորութիւնը): Այդ օրերուն, Երուսաղէմի մէջ կ'ապրէր արդար մարդ մը՝ Սիմէոն անունով, որուն փափաքն էր աչքերը չփակած մարդկութեան Փրկիչը տեսնել: Ծերունին մանուկ Յիսուսը տեսնելով, կը զգայ Աստուծոյ ներկայութիւնը եւ մանուկը գրկելով բարձրաձայն կը յայտարարէ. «Այժմ ո՛վ Տէր, համաձայն քու խոստումիդ՝ ձգէ՛ որ ծառադ խաղաղութեամբ մեռնի, որովհետեւ աչքերովս տեսայ Փրկիչը, որ դրկեցիր բոլոր ժողովուրդներուն, որպէս լոյս՝ հեթանոսները լուսաւորելու եւ քու ժողովուրդիդ փառքը ըլլալու»:

Այս աւանդութեան որպէս յիշատակութիւն, Տեառնընդառաջը կը տօնախմբուի Ս. Ծնունդէն քառասուն օր ետք, Փետրուարի 14-ին:

Դարերու ընթացքին, Տեառնընդառաջը առիթ ընծայած է շատ մը հայ թէ օտարազգի արուեստագետներու ներշնչուելու եւ հարստացնելու իրենց ազգային մշակոյթը մանրանկարչական կամ սրբանկարչական գործերով: Օրինակ՝ միջնադարու նշանաւոր մանրանկարիչ՝ Թորոս Ռոսլին այս թեմայով գեղեցիկ գործ մը ունի, որ մեզի հասած է 1267-1268 թուականներէն:

Հայ եկեղեցւոյ մէջ, Տեառնընդառաջի տօնակատարութիւնը կը յիշեցնէ հեթանոսական ծագում ու-

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

նեցող հայկական Տիր կամ Միիր աստուածներու պաշտամունքի հնագոյն ձեւերը: Նախատօնակի արարողութենէն ետք, սովորութիւն դարձած է եկեղեցւոյ բակին մէջ խառոյկ վառել: Հրավառութեան մասին քրիստոնէական որեւէ օրէնք գոյութիւն չունի: Ընդ-

հակառակը, նման հաւատալիքներ ու բարքեր պատմութեան ընթացքին խստիւ քննադատուած են եկեղեցական հայրերու կողմէ:

Հեթանոսական կրօնքին մէջ մեծ տեղ կը գրաւէր կրակի պաշտամունքը, որպէս լոյսի եւ ջերմութեան խորհրդանիշ: Տիրը կը համարուէր Արամազդի գրիչը, եւ յոյն աստուածներէն՝ Ապոլոնի նման կը պատկերացուէր նետով ու աղէղով:

Տեառնընդառաջի հրավառութիւնը առաւելաբար կը պատշաճի հայոց կրակի աստուած Միիրին, որուն տաճարին մէջ կը գտնուէր ատրուշանը՝ մշտնջենաձառ կրակը, որպէս նուիրական սրբութիւն:

Երբ Ս. Գրիգոր Լուսաւորիչ կործանեց Տիրի, Միիրի եւ ընդհանրապէս աստուածներու մեծեանները, անոնց տեղ կառուցեց եկեղեցիներ: Այսպիսով հեթանոսական սովորութիւնները փոխարինեց քրիստոնէական տօներով:



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՌԻՅԱ ԿԱՐԵԱՆ-ՏԻՔՈՒՔԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՌԱՅՅԻ ՔԵՇԻՇԵԱՆ

ՀՐԱԲՈՒՆԻՆ ՊՁՏԻԿԸ

Ֆրիքսոն կ'ապրի Էբուատորի մէջ, Հարաւային Ամերիկա, աշխարհի ամենէն բարձր հրաբուխներէն մէկուն՝ Չիմպորոզոյի վրայ: Ան շրջանին շատ ծանօթ է:

Ֆրիքսոն իր ցեղախումբին Փուրուիաներուն հետ կ'ապրի 3200 մէթր բարձրութեան վրայ, սառած հրաբուխին լանջին գիւղի մը մէջ: Այս հրաբուխը անոնք կ'անուանեն «Պապ Չիմպորազո», եւ իրենց համար անկէկա աստուծոյ նման է: Անոնց առօրեայ կեանքը անկէ կախեալ է:

Առաւօտուն 9 տարեկան Ֆրիքսոն կ'արթննայ ժամը 6:00-ին արեւուն հետ: Իբրեւ նախաճաշ ան կ'ուտէ խմորեղէնով եւ պանիրով ապուր մը եւ կը խմէ սուրճ: Ապա ան կը հագուի իր տարազը եւ դպրոց կ'երթայ:

Ամէն երկուշաբթի աշակերտները կը հաւաքուին բակին մէջ՝ միասին երգելու համար երկրին եւ շրջանի քայլերգները, որոնք կը պարգեւեն իրենց սիրելի հրաբուխին:

Կեսօրին Ֆրիքսոն կը վերադառնայ տուն՝ մօրը օգնելու համար: Անոնք միասին անասունները կը տանին արածելու իրենց եգիպտացորենի դաշտերուն մօտ: Անոնց գրեթէ բոլոր սնունդը կու գայ հրաբուխին լանջին մշակած դաշտերէն: Անոնք նոյնիսկ իբրեւ դարման կը գործածեն հոն աճող բոյսերէ, երիցուկը ստամոքսին համար, ալօ է վերան մորթին համար...

Գիշերը Ֆրիքսոն կը վախնայ Չուփաքապրայէն: Ըստ առասպելին, այս «անիծուած» շունը՝ գիշերները կ'իջնէ հրաբուխին գագաթէն՝ այծերը ուտելու համար: Շատ առասպելներ կը պատմուին հրաբուխին մասին:



ԽԱՍՈՒԵՐ

Կրնա՞ս գտնել երաժշտութեան գործիքին հասցնող ճամբան:




Կրնա՞ս գտնել առաջին պատկերին եւ մնացած պատկերներէն իւրաքանչիւրին միջեւ գոյութիւն ունեցող երկու տարբեր մանրամասնութիւնները:



Գունաւոր մատիտներդ բեր, ու ներկէ այս գեղեցիկ պատկերը:

ՍՊԻՏԱԿ ԻՇԽԱՆՈՒՅԻՆ



Քրոջը ձեռքերն կը բռնէ եւ այնքան արագ կը քալէ, որ Անին հեւ ի հեւ կը վազէ իրեն հասնելու համար:

- Ի՞նչ գտար, ո՞ր կ'երթանք, խօսէ՛, եթէ կը հաճիս:

- Համբերէ, հիմա՛ կը տեսնես:

Արան կանգ կ'առնէ իր ընկերոջ Արմենին տան դիմաց եւ դուռը կը թակէ: Արմենին մայրը դուռը կը բանայ: Չարմացած կը նայի փոքրիկներուն:

- Տիկին, կ'ըսէ Արան, ինքնավըտահ, եթէ ձեր հացի աւելցուցները տոպրակի մը մէջ լեցնելով, դրան առջեւը դնէք, մենք ամէն օր կու գանք, կ'առնենք եւ բաղիկներուն կը տանինք որ անօթի չմնան: Կարելի՞ է:

- Անշուշտ կարելի է, այս ի՞նչ լազաղափար յղացեր էք, ապրի՛ք:

Անին եւ Արան շտրիակալութիւն կը յայտնեն ու ձեռք ձեռքի բռնած կը վազեն: Յաջորդաբար թաղին բոլոր դրացիներուն կը հանդիպին: Շատեր սիրով կ'ընդունին, քիչերը միայն կը մերժեն:

Յաջորդ օրն իսկ պաշարի խաշոր տոպրակներով բռնաւորուած, Անին

եւ Արան ուրախ գուարթ կը հասնին լճակին ափը:

Եւ կը մնան քարացած:

Արմիկը, Արային ընկերը, ձեռքը երկար ճիւղ մը բռնած, հարուածներ կը տեղացնէ Սպիտակ Իշխանուհիին գլխուն:

Խեղճ կենդանին սարսափած աստիճանով կը վազվզէ սուր ճիչեր արձակելով:

- Ինչո՞ւ կը ցուցնես Սպիտակ Իշխանուհիս, ի՞նչ ըրաւ քեզի, խե՞նթ ես, ի՞նչ ես, գնա՛ այստեղէն, կը ճչայ Անին:

Արան՝ ապշած է: Իր լաւագոյն ընկերոջ այս վերաբերմունքը կը զարմացնէ զինք:

- Չեմ հասկնար Արմեն, ինչո՞ւ այս չարութիւնը, կը հարցնէ:

Արմեն ինքն ալ շշմած է: Գլուխը գետին հակած՝ չի պատասխաներ:

- Քեզի պէս չար տղու մը հետ ինչպէ՞ս կրնամ ընկերութիւն ընել: Ի՞նչ պիտի ըսէ մայրիկդ եթէ իմանայ: Գնա՛, հետդ պիտի չխաղամ:

Արմեն շփոթած է: Ինք չա՛ր, ո՛չ, ինք չար չէ՛, պարզապէս ուզած է ճիւղով խաղալ կարապին հետ: Ան կը նայի ընկերոջը ու կմկմալով, արցունքը աչքերուն, կ'ըսէ.

- Ե՛ս, ե՛ս չե՛մ, ես կ'ուզեի կարապը

խաղցնել, հետը խաղալ:

Արան կը նայի Արմենին, կը խղճայ վրան, բայց սիրտը կտորած է:

- Դո՛ւն, կ'ըսէ, եթէ չար չե՛ս, հապա անխտէ՛ք ես:

Անին լալով Սպիտակ Իշխանուհիին ետեւէն կը վազէ:

- Ափսո՛ս... սարսափած, վիրաւորուած թռչունը կը փախչի, հեռո՛ւ, հեռո՛ւ, պահուրտելու համար եղեգներուն մէջ, իոն ուր չար տղաք չեն կրնար հասնիլ իրեն: Լուռ գիշեր է: Անին արթուն է, Արան ալ: Արմենն ալ արթուն է, կը խորհի թէ սխալ ըրած է եւ ինքզինք դժբախտ կը զգայ:

Յանկարծ աղմուկ մը կը լսէ:

Մէկը ննջասենեակի պատուհանին քար կը նետէ: Երկրորդ հարուածին Արմեն կը վազէ դեպի պատուհանը եւ փեղկը կը բանայ: Ի՞նչ տեսնէ: Ամայի փողոցին մէջ Արան միս մինակ կեցած, ձեռքերով նշան կ'ընէ իրեն որ վար իջնէ:

(Շարունակելի)



ՉԱՆԱՉԱՆ... ՉԱՆԱՉԱՆ...

* Պանքոքի մեջ Թայլանտ, Ոսկիե Պուտտան աշխարհի ամենէն մեծ ոսկիե արձանն է: Անոր հասակը կը հասնի 3 մեթրի, իսկ ծանրութիւնը՝ 5.5 թոնի: Ան շինուած է 1200-1300 թուականներուն մարդիկ արձանը յատուկ կիրէ խաւով մը ծածկեցին՝ զայն պահպանելու համար գողերէն: Ապա ան մոռցուած մնաց 200 տարի, մինչեւ 1950-ական թուականները, արձանը տեղափոխելու ժամանակ գաճի կտոր մը կ'իյնայ, յայտնաբերելով անոր տակ պահուած ոսկին:

* Հնդկաստանի Լաքնու շրջանին մեջ գտնուող Տը Սիթի Մոնթետորի Սքուլ դպրոցը աշխարհի ամենէն մեծ դպրոցն է: Ան կ'ընդունի աւելի քան 50 հազար աշակերտ՝ 5-17 տարեկան:

* Եգիպտոսի մեջ Կիզայի մեծ բուրգին շինութիւնը վերջացած է ԶԱ մօտաւորապէս 2560 թուականին: Ան մնաց աշխարհի ամենէն բարձր շէնքը մինչեւ ԶԵ 1300 թուական, երբ շինուեցաւ Լիւքոն Զաթետրալը մօտաւորապէս 3860 տարի ետք:

* Գիտէիր, թե բոլոր արիւնները կարմիր չեն: Բազմաթիւ տարբեր կենդանի էակներ ունին դեղին կամ կանաչ արիւն. ինչպէս մողէզի տեսակներէն մէկը եւ ուտիճները, որոնք ճերմակ արիւն ունին:



ՄԱՐԶԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԵՆ ԳԵՇ ԱՐԴԻՆՔԸ

Տարօրինակ Ձախողութիւն Մը
Ֆութպոլի խաղ մը պատմութեան մէջ անցած է անոր արձանագրած արդիւնքին պատճառով՝ 149-0: Սակայն ասիկա կատարուած է, ոչ թէ խաղ սիրողներու միջեւ եղած մրցումի ընթացքին, այլ արհեստավարժներու միջեւ, պաշտօնական մրցաշարքի մը:

Այս տարօրինակ խաղերը տեղի ունեցան 2002-ին Մատակասքարի մէջ, Ափրիկէ:

Նախորդ խաղին իրաւարարին կեցուածքին դեմ բողոքելու համար խումբերէն մէկը որոշեց իր գնդակը նետել իր բերդին մէջ:

Այս ձեւով 90 վայրկեաններու ընթացքին եւ 149 անգամ խաղցողները զբաղեցան գնդակը իրենց բերդին մէջ նետելով: Այսինքն 1 կոլ՝ ամէն 36 երկվայրկեանը: Ասիկա ուրիշ ձեւ մըն էր չյաջողեցնելու համար հանդիպումը, նոյն ատեն տարօրինակ մրցանիշ մը արձանագրելու եւ մտնելու ֆութպոլի պատմութեան մէջ:

Գիտէ՞ր, թե

Մինչեւ 20-րդ դարու կեսերուն ֆութպոլի գնդակները կապով կը գոցուէին: Ֆութպոլի առաջին ախոյեանութիւնը տեղի ունեցաւ Ուրուկուի մէջ, Հարաւային Ամերիկա: Նկատի ունենալով, որ ճամբորդութիւնը երկար էր, բազմաթիւ երկիրներ չմասնակցեցան: Այս ձեւով ախոյեանութեան ներկայ էին միայն 13 երկիրներ:

